

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիտաժողովի զեկույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱՄԿՉՈՒԹՅՈՒՆ

2009

**ՊԵՅՈ ՅՎՎՈՐՈՎԻ «ՆԱՅԵՐԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՆՐԱ ՆԱՅԵՐԵՆ ՄԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Նայ և բուլղար ժողովուրդներն իսկապես որ միանման ճանապարհ են անցել դարերի միջով: Նրանց հարաբերությունների պարմության մեջ, անշուշտ, կարևոր են բոլոր ուղղություններն ու ոլորտները՝ թե՛ ռազմաքաղաքական ու քաղաքական, թե՛ հոգևոր-մշակութային բնագավառները: Նամանման պարմական ճակատագիր ունեցող այս ժողովուրդների պարմությունը լի է ոչ միայն դարերի հուվույթում իրականացրած խաղաղ համագործակցության, այլև համընդհանուր թշնամու՝ օսմանյան բռնակալության դեմ մղված համարեղ հերոսական պայքարի փայլուն էջերով ու ողբերգական դրվագներով:

Քիչ չեն եղել թուրքերի դեմ մղած կռիվներում, մանավանդ բալկանյան պարերազմներում թուրքական լծից Բուլղարիայի ազատագրության համար բուլղարների հեղ կողք կողքի կռված հայ կամավորները, իրենց քաջությամբ ու փառքով պսակած հայրորդիներից շարերն են արժանացել բուլղարական պետության շքանշաններին ու մեդալներին, մյուս բարձրագույն պարգևներին: Բավական է հիշել թեկուզ միայն Բուլղարիայի ազգային հերոսի կոչման արժանացած գեներալ-մայոր Անդրանիկի և «Արիության համար» շքանշանի ասպետ պատուհիկ Նժդեհի անունները: Նայկական կամավորական վաշտի մարտական դրոշի վրա նույնպես դրոշմված էր «Արիության համար» շքանշանը:

Բայց այս շեղումը մեզ կարող է շար հեռու փանել, ուստի այն թողնելով պարմաբաններին՝ կանգ առնենք մշակութային ու մանավանդ գրական երևույթների վրա, որոնք նույնպես ազգային նույն մտածողությունների, ազատագրական նույն ձգտումների արտահայտություններն են երկու ժողովուրդների գրականությունների մեջ:

Նայերիս միշտ էլ հոգեհարազատ է եղել բուլղարական գրականությունը, հարկապես պոեզիան ու դրամատուրգիան, որոնց լավագույն նմուշները պարբերաբար թարգմանվել են հայերեն ու դարձել մեր ժողովրդի սեփականությունը: Խրիստո Բոբևի, Իվան Վազովի և մանավանդ Պեյո Յավորովի սրեղծագործությունները, անկախ այն բանից՝ բուլղարական կյանք են պարկերում թե հայկական, կարծես մեր իսկ կենսագրության հարազատ արտացոլյալներն են: Եվ անկախ այն բանից՝ գրականագիտությունն ինչպես է արժևորել Պեյո Յավորով բանաստեղծին, ինչպես է գնահատել

նրա սիմվոլիստական պոեզիան, ազգային-հայրենասիրական կամ գյուղական կյանքն ու ապարմությունները պարկերող երգերը, հայ իրականության մեջ նա արդարացիորեն արժանացել է պարշաճ գնահատանքի. նրա անունով է կոչվում Երևանի 131-րդ հանրակրթական դպրոցը, նրա «Վիրտի փեշերին» պիեսը 1966-67թթ. բեմադրել է Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնը, ՄԽՍ Ժողովրդական նկարիչ Գ. Ահարոնյանի սրեղծագործությունը՝ Սոֆիայում կանգնեցված «Պեյո Յավորով» հուշարձանն ունի «Երախտագետ հայ ժողովրդից» մակագրությունը, իսկ Յավորովի բանաստեղծությունները և առավել շար «Նայերը», հիշվում են մրավորական մեծ ու փոքր հավաքներում, պաշտոնական հանդիսություններում արտասանվում ներշնչումով ու անկեղծ ոգևորությամբ:

Իր մղած ուշ շրջանի գրեթե բոլոր մեծ պարերազմներում Թուրքան թեն պարվել է, սակայն գերտերությունների զարգացման «բարեհաճությամբ» երբեմն վերցրել է հաղթողի բաժին՝ ավելի սաստկացնելով հպարտ փոքրամասնությունների և մանավանդ քրիստոնյա ժողովուրդների նկարմամբ հալածանքները: Նրան թեն հաջողվեց ճնշել 1876թ. բռնկված բուլղարական ապարմությունը, բայց 1877-78թթ. ռուս-թուրքական պարերազմում պարվեց ու հարկադրված եղավ հրաժարվել Օսմանյան կայսրության ճիրաններում եղած որոշ տարածքներից: Ահա այդ իրադարձությունների պարույրակական բանաստեղծական բանաձևը.

*Արդեն օսմանյան կապե հսկայի
ձեղքն էր մեծսևուս,
Ու մեջքը՝ ձկնում
Բանականության տաքուկ շողերից
Ռումին ու բուլղար, սլովակ ու սերբ
Պոկվել են նրա կապե կողերից...
Նույն աններեյի մտքին է հակվում,
Նույն ախարով հիմա հայն է վարակվում...*

Բեռլինի կոնգրեսում Նայկական հարցի հայտնի լուծումից քաջալերված արյունարբու սուլթան Աբդուլ-Նամիդը 1894-96թթ. կազմակերպեց հայերի զանգվածային առաջին մեծ ջարդերը: Շուրջ 300 000 հայերի բնաջնջման հերկանքով ուռճացավ գաղթականության ալիքը, և Արևմտյան Նայաստանի հայաթափումն ընդունեց աննախադեպ սոսկալի չափեր: Գաղթական հայերի մի մասն էլ ապաստան գտավ հյուրընկալ Բուլղարիայում ու արժանացավ բուլղար ժողովրդի բարյացակամ ու կարեկից վերաբեռմունքին: Այստեղ էլ՝ իր հայրենիքում, Պեյո Յավորովը

1899 թվին ճանաչեց այդ հայրենագուրկ մարդկանց, խորությամբ ըմբռնեց նրանց անփարատ վիշտը և անմիջական փափավորությամբ գրեց իր «Նայերը» խորագրով նշանավոր բանաստեղծությունը, որը նույն փարտու էլ երապարակվեց նաև հայերեն:

Բնական և օրինաչափ էր այս բանաստեղծության ծնունդը. թե՛ Պեպկո Սլավեյկոյին, թե՛ Դոբրի Չինպուլովին, թե՛ Խրիստո Բոպևին, թե՛ Իվան Վազովին ու ուրիշների հաջողվել էր ստեղծել ազապագրական պայքարի բոցաշունչ ու բարձրարվեստ երգեր: Նամանման իրավիճակի թելադրանքով էին ստեղծվել նաև Պեշկյաշյանի «Ջեթոնյան երգեր» և Ռ. Պարկանյանի՝ նույն ռուս-թուրքական պայքարազմի շրջանում գրած «Ազապ երգեր» բանաստեղծական շարքերը, որոնք քաղաքացիական քնարերգության գլուխգործոցներ են: Նովի. Թումանյանի ասելով՝ «Ազապ երգերով», Գամառ Բաթիպան, որպես ռազմերգու, դառնում էր «սահեղ և անմրցելի»:

Այսպիսով՝ թուրքական բռնափրկության դեմ ազապագրական պայքարի անհրաժեշտության գիտակցությունը, նույն կենսական հանգամանքները փարբեր ժողովուրդների գրականությունների մեջ առաջ են բերել թեմափոխ-գաղափարական ընդհանրություններ: Այնուհայտ փարբերություններն արտահայտվում են ազգային գեղարվեստական մրաձողության և բանաստեղծների անհատականության մակարդակներում:

Պեյո Յավորովն ինքն էլ գրել է «Նայրուկի երգեր» երկմաս մի բանաստեղծություն, որն աչքի է ընկնում հայերիս համար հարազատ ազգային ազապության համար պայքարի ելած ժողովրդի կամքի ու վճռականության, զոհաբերվելու, բայց բաղձալի նպատակն իրագործելու վճռականության ու հպարտության բարձրարվեստ պատկերմամբ: Այս բանաստեղծությանը հավանաբար ծանոթ է եղել նույն խորագրով իր բանաստեղծական շարքը գրած Ավ. Իսահակյանը: Նայրուկի է նաև, որ Մակեդոնիայի ազապագրության համար իր ղեկավարած ջոկատով թուրք շարդարարների դեմ կռվել է նաև նույն Պեյո Յավորովը և այդ իրադարձությունները գեղարվեստորեն պատկերել «Նայրուկային անուրջներ» (1908թ.) հուշագրական երկում:

Փաստորեն հայոց Մեծ եղեռնը իրականում սկիզբ էր առել 1894-96թթ. և Պ. Յավորովի «Նայերը» բանաստեղծությունն այդ ողբերգական իրադարձությունների օտարալեզու առաջին գեղարվեստական արձագանքն էր, ամենափափուկից ու ազդեցիկ մի ստեղծագործություն, որը հայերիս նկատմամբ անկեղծ սիրտ ու մեր ողբերգության հանդեպ հարազատի կարեկցության արտահայտություն է:

Պ. Յավորովի «Նայրուկի երգերի», ինչպես նաև «Նայերը» բանաստեղծության լեզուն, սակայն, այնքան է ժողովրդական ու պարզ, և ոճը՝ հստակ ու մաքուցելի, որ բնավ չես կասկածի, թե այս բանաստեղծը երբևէ սիմվոլիստական խորհրդավոր փեսիկների կամ Մեծարենցի ասած «բառերու խավարաբարդումների» կողմնակից է եղել: Ինչնով էր հպարտանում բուլղար հայրուկը. ճիշտ ու ճիշտ այն արարքով ու սխրանքով, որ նպատակ ու հպարտություն է նաև հայ հայրուկի համար:

*Их на ружье бы, лубушка, право,
Тотчас менял я;
С ним бы на славу
турок стрелял я.-*

հնչում է ռուսերեն թարգմանությամբ:

«Նայերը» բանաստեղծությունը, որը գրված է պանդուխտ ու հայրենագուրկ հայի ցավի ու փառապանքի խոր զգացողությամբ, նրա ցասման ու վրեժի այն ըմբռնումով, որ հարազատ է հենց բուլղարին: Այդ բանաստեղծությունն ունի գնահատելի շար արժանիքներ, ինչպես հայոց «արյունոտ անցյալի» և «անիծված ճակատագրի», ոտիսի կողմից բնաջնջվելու սպառնալիքի վկայակոչումներով հայության փառապանքի, հրդեհված հայրենի փնների ու «սև անապատ» դարձած հայրենիքի պատկերումը և դրանով իսկ՝ հայրենագուրկ ու թափառական հայի վիշտը գինու մեջ խեղդելու բնական մղումի գեղարվեստական հիմնավորումը, սակայն, մեր խորին համոզմամբ, անչափ կարևոր ու բացառիկ է հայ երգի յավորովյան ընկալումն ու մեկնաբանությունը: Այդ երգը, ինչպես կհամոզվենք, բարձրանում է մարդկանց սրտից, խառնվում է բնության փարբերքին, ազդում է նույնիսկ փոթորկի վրա և նրա թևերով փարածվում «բոլոր ծագերն աշխարհի»: Երգի և այրող արցունքի մեջ բանաստեղծը փեսել է վրեժի և ըմբռսության այն կայծակները, որոնք առասպելական թերի պես շուտով հայտնվելու էին հայ քաջերի ձեռքին՝ որպես վրեժի և հպարտման ամհավարչյա:

«Նայերը» բանաստեղծությունը հայերեն մի քանի թարգմանությունների է արժանացել, որոնց զուգադրական քննությունը թարգմանական արվեստի խնդիր է. մինչդեռ մեզ այս պահին հեղաբերում է բանաստեղծության բովանդակային կողմը, որը պիտի փորձենք ներկայացնել, մեր համոզմամբ ամենից հաջողված՝ Նամո Սահյանի թարգմանության միջոցով՝ զուգահեռելով բուլղարերեն բնագիրն ու ռուսերեն թարգմանություններից մեկը:

Տասնմեկ և փասը վանկերով ութ փողանի վեց փուն, կանոնավոր հանգավորմամբ խիստ ու կուռ կառույց, որը ուրիշ լեզվով նույնությամբ վերարտադրելն ու պահպանելն անկարելի է առանց մեծ կորուստների: Այդ պարզառով էլ թե՛ ռուսերեն, թե՛ հայերեն թարգմանելիս պետք է հաղթահարվեին որոշակի դժվարություններ՝ բովանդակային հարստությունն ու զգացմունքային համանվազը ճիշտ փոխանցելու համար: Երկու թարգմանություններում էլ չկան դարձվածների բառացի պատճենումներ, ազատ մտքեցումը հնարավոր է դարձրել չնչին շեղումներով բնագրի ոգուն հարազատության ապահովումը: Բայց եթե ռուսերեն թարգմանության մեջ (թարգմանիչ՝ Կ. Ջենկևիչ) հասկանալիորեն պահպանվել է փասնմեկ և փասը փողային շարակարգությունը, ապա դիտարկվող հայերեն թարգմանության փնտրել կառուցված են բացառապես փասներկու վանկանի փողերով: Դա, անշուշտ, թարգմանի մեղքը չէ և իրականում թերություն էլ չէ, այլ հայերենին բնորոշ յուրահատկություն ու թարգմանի վարպետություն, որոնց համադրումով իրականացել է բանաստեղծության բովանդակության և էության բարձրարվեստ փոխանցումը: Նիմա դժվար է ասել՝ Նամո Սահյանը անմիջաբար բնագրի՞ց է թարգմանել, թե՛ օգտագործել է նաև ռուսական թարգմանություններ: Նավանական են երկուսն էլ, որովհետև նենինյան բարձրորակ թարգմանություններով հայտնի, ռուսերենին կապարելապես փիրապետող Նամո Սահյանը չէր կարող անհաղորդ լինել ռուսերենին ցեղակից բուլղարերենին: Պարզ համեմատության համար բերում ենք միայն մեկական փուն բնագրից, ռուսերենից ու հայերենից՝ եզրակացությունը թողնելով ընթերցողին.

Բուլղարերեն -

*Изгнанници клети, отломки нищожна
Навинаги храбър народ мъченик
Дечица на майка робиня тревожна
И жертва на подвиг чутовно велик –
Далеч от родина, в край чужди събрани,
Изпити и бледни, порытен бордей,
Те пият, а тънат сърцата им в рани,
И пеят, тъй както през съззи се пей.*

Ռուսերեն -

*Изгнанники, жалкий обломок ничтожный
Народа, который все муки постиг.
И дети отчизны, рабыни тревожной,
Чей жертвенный поджиг бесмерно велик.*

*В краю им чужом, от родного далеко,
В землянке, худые и бледные, пьют,
А сердце у каждого ноет жестоко;
Поют они так, как сквозь слезы поют.*

Իսկ հիմա՝ նույն փան հայերենը.

*Տարագիրներ են նրանք, նրանք բեկորն են չնչին՝
Ուտիւներից հալածված քաջակորով մի ազգի,
Եվ զավակներն են զրկված՝ հայրենիքի իրենց հին,
Որ ողջակեզն է դարձել անօրինակ սիրանքի:
Նրանք՝ վրիտ, դավախար, հեռու իրենց աշխարհից,
Օտար խուղի հարկի փակ խմում են ու երգ ասում
Կծկվում են, կարկամում նրանց սրտերը ցավից,
Եվ նրանց երգը աղի արցունքի պես է հոսում:*

Վերևում մեր մարմանշած «շեղումը» վերաբերում է ընդգծված վերջին փողին: Նկարեցիք հավանաբար, որ բնագրում և Ջենկևսկու ռուսերեն թարգմանության մեջ այս փողը բառացի հնչում է այսպես.

Երգում են նրանք այնպես, կարծես արցունքի միջից են երգում:

Միվա Կապուփիկյանի թարգմանության մեջ էլ այն հնչում է **հենց** այսպես.

... Եվ երգն արցունքի միջից է հոսում...

Ո՞ր թարգմանիչն է ճիշտ վարվել՝ մտածելու խնդիր է. բայց պարզ է մի բան, որ հայի համար «արցունքի միջից» կամ «արցունքի միջով» երգելը նվազ հասկանալի է, քան երգի՝ աղի արցունքի պես հոսելը:

Եզրափակիչ փան մեջ էլ Ն. Սահյանը թույլ է փվել մի այլ «շեղում», որը, սակայն, ավելի է ընդգծում բանաստեղծության ոգին: Բնագրում և ռուսերեն թարգմանության մեջ վերջին փողը կրկնվում է նույնությամբ, մինչդեռ հայ թարգմանիչն այն դարձրել է՝

Նրանք այնպես են երգում, որ կարծես լաց են լինում:

Այսպիսի շեղումները թարգմանչին ներելի են, որովհետև նրանց նպատակն է բնագրի էությունը յուրազգի ընթերցողին հարազատորեն փոխանցելը և ոչ թե բառացի նմանակումը, որ կարող է բնագրից հեռացնել այնպես, ինչպես ռուսական ելկա – քաղկա – ն թարգմանում են եղևնիներ և փայտիկներ կամ вот ты даешь՝ համա թե փախի ես...

Ասվածի լավագույն հիմնավորումը կլինի այն, որ մենք, առանց բանաստեղծությունը մասնավերելու, նրա ընթերցումը շարունակենք երկրորդ փնից, կհամոզվենք, որ Ն. Սահյանը բնագրի էությունն արտահայտել է այնպիսի հարազատությամբ, որ նախապես չիմացողը կարող է կարծել թե նրա սեփական ստեղծագործությունն է.

*Եվ խնում են, և երգում, որ հարբելով մոռանան
Իրենց անցյալն արյունոտ, ճակատագիրն ակեռով,
Մոռացություն է բերում գիւնին, թեկուզ մի վայրկյան,
Եվ ցավերն են մեղմանում կրծքերի տակ ծվարված:
Գլուխներն են մթազևում, մթազևում է ամեն ինչ
Նայրենիքի փառապած կերպարանքն է ջրանում:
Ու չի հասնում օգնության և աղերսի ոչ մի ճիչ
Զավակներին իր հարբած... Եվ մշուշն է խրանում:*

*Ինչպես նախիրը քաղցած գազանների ոռնակից՝
նրանք փախել են, ցրվել աշխարհներում հեռավոր,
Եվ սպառնում է նրանց շատացրելով զայրագին
Բնաջնջել հիմնովին ոսոխի թուրն ահավոր:
Սև անապատ են դարձրել նրանց հողը հոգեթով,
Նայրենի փունը նրանց հրդեհել են ու քանդել,
Եվ թափառում են նրանք երկրներվիր, ծովեծով,
Միայն պանդոկն է բացում իր դռները նրանց դեմ:
Նրանք խնում են... Եվ նրանց մոլեգին երգն է ծորում,
Արյունաքամ են լինում նրանց սրբերը կարծես,
Խեղդում է վիշտը նրանց, վրեժի բոցն է այրում,
Եվ հոսում են անդադար արցունքները աղեկեզ:
Նրանց սրբերը ցամառն կրակներով են լցված,
Այրերն ի վար արցունքի այրող շիթեր են կաթում,
Որտեղ պես է թնդում զայրագին երգը նրանց,
Եվ աջերում վրեժի կայծակներ են բոցկլտում:*

*Եվ փոթորիկը ձմռան՝ նրանց երգը կրկնելով,
Մոլեզվում է ու ոռնում, մռնչում է կապաղի,
Եվ այդ երգը խոռված իր թևերին առնելով՝
Տարածում է, հասցնում բոլոր ծագերն աշխարհի:
Չարագուշակ երկիևքը ավելի է մթազևում,
Մասրկանում է գիշերվա սառնամանիքն ավելի,
Երգի որտեղն ավելի, ավելի է մոլեզվում,
Ավելի է բարձրանում փոթորկի ձայնն ամենի:*

*Եվ խնում են, և երգում... Բեկորները այն չնչին՝
Ոսոխներից հալածված քաջակորով մի ազգի,
Զավակները այն զրկված՝ հայրենիքի իրենց հին,
Որ ողջակեզն է դարձել անօրինակ սիրտակրի:
Ուրաբոբիկ, վշտաբեկ, պարտառաված շորերով,
Նայրենիքից անջարված նրանք գիւնն են խնում,
Եվ ձգրելով մոռանալ փանջանքները բյուրավոր՝
Նրանք այնպես են երգում՝ կարծես թե լաց են լինում:*

Արվեստի բոլոր մեծ երկերի նման այս բանաստեղծությունը պահպանում է իր արդիական հնչեղությունը՝ որպես եղբայրական բուլղար ժողովրդի մեծ գավակ Պեյո Յավորովի, մեր թանկ հարազատի սրտաբոխ ու բարձրարվեստ խոսք, որն ամեն անգամ հիշում ենք սրտագին երախտագիտությամբ դեպի այն ժողովուրդը, որ դժվար օրերին ապաստան է տվել մեր ժողովրդի ցանուցիր բեկորներին, ծնել է այն մեծարարանդ բանաստեղծին, որը մեր վիշտը, մեր ողբերգությունը ներկայացրել է աշխարհին՝ հարազատի սրտացավությամբ ու պահանջարիքոջ իրավունքով: